ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/29 « 18 » 01 2021 թ.

Ձեր

«Մաքս Պրինտ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ00145961)
տնօրեն Բ. Գևորգյանին
ք.Երևան, Կոմիտասի պող. 60/2
էլ. հասցե՝ maxprint061079@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1» ծածկագրով պատվոգրերի ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Մաքս Պրինտ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի (մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 200 /երկու հարյուր/ հատ ոստիկանության պատվոգիր, սակայն ընդհանրապես չի մատակարարել):

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ

ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Մաքս Պրինտ ՍՊԸ-ի միջև 20.04.2020թ-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՆՅՈՒԹԵՐ-2020/13-ՈՍ/1» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 58 000 /հիսունութ հազար/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Մաքս Պրինտ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Պեկտ, ոստիկանության գնդապետ ***Ա. Ներսիսյան***

հեռ. /010/ 59-60-21
Լ. Սահակյան